

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2014թ. հոկտեմբերի 30-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 24-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Է. Շաթիրյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ.

1. *Հոբելյան:*
2. *Գիտական հաղորդում (զեկ.՝ պրոֆ. Ա. Հայկյանց):*
3. *Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Վ. Քոչարյան):*
4. *Հաղորդում 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացիկ ստուգումների արդյունքների մասին (զեկ.՝ պրոֆ. Հ. Խաչիկյան):*
5. *Հաղորդում իրավագիտության ֆակուլտետի հեռակա բաժնի մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացքի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):*
6. *Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավման հարցը:*
7. *Ընթացիկ հարցեր:*

1. Հոբելյան.

ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ, պրոֆ. Գ. Ղազինյանը Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի անունից շնորհավորեց պրոֆեսոր Տարիել Բարսեղյանին՝ ծննդյան 75-րդ տարեդարձի կապակցությամբ՝ ընդգծելով հոբելյարի դերը հայրենական իրավագիտության զարգացման, ինչպես նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կյանքում ունեցած ներդրման գործում և նրան հանձնելով հուշանվեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Շնորհավորական խոսքերով հանդես եկան նաև Ն. Այվազյանը և Վլ. Հովհաննիսյանը:

Տ. Բարսեղյանը հանդես եկավ շնորհակալական խոսքով:

2. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում. «Միջազգային մասնավոր իրավունքի բարեփոխման հայեցակարգը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ բաժին)» (զեկ.՝ պրոֆ. Ա. Հայկյանց):

Զեկուցողն ընդհանուր գծերով անդրադարձավ միջազգային մասնավոր իրավունքի

վերաբերյալ ՀՀ օրենսդրության բարեփոխման անհրաժեշտությանը, ոլորտում տեղի ունեցած զարգացումներին և առկա վիճակին, կոլիզիոն իրավական կարգավորումների հիմնական խնդիրներին, մարտահրավերներին և օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղություններին, ինչպես նաև այլ իրավական ակտերում ամրագրված կոլիզիոն նորմերի վերանայման խնդրին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Դանիելյանը, Վլ. Հովհաննիսյանը, Ն. Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Հաղորդումը կցվում է արձանագրությանը:

3. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Վ. Քոչարյան):

Ձեկուցողը համակարգված տեսքով ներկայացրեց տեղեկատվություն ամբիոնի կողմից կատարված ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ դասընթացների ծրագրերի վերանայման, նոր դասընթացների ներդրման, դասավանդման մեթոդաբանության վերանայման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքի, այդ թվում՝ ամբիոնի անդամների հրատարակումների, գիտաժողովներին և գիտահետազոտական ծրագրերին նրանց մասնակցության վերաբերյալ:

Անդրադարձ կատարվեց ամբիոնի ասպիրանտների ու հայցորդների և ուսանողության հետ տարվող աշխատանքներին, ինչպես նաև ամբիոնի՝ միջազգային համագործակցության ոլորտում ծավալած գործունեությանը:

Ձեկուցողն անդրադարձավ նաև ամբիոնի աշխատանքում տեղ գտած որոշ թերություններին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Հ. Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը գնահատել բավարար:

Հաշվետվությունը կցվում է արձանագրությանը:

4. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացիկ ստուգումների արդյունքների մասին (զեկ.՝ պրոֆ. Հ. Խաչիկյան):

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ. Խաչիկյանը ներկայացրեց իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացիկ ստուգումների ամփոփ արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանն, անդարադառնալով ներկայացված ցուցանիշներին, ներկաների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա,

որ առավելապես այն դասընթացների հետ կապված, որոնք դասավանդվում են տարբեր դասախոսների կողմից, կուրսերի հոսքերի ցուցանիշների միջև նվազագույն և առավելագույն գնահատականների առումով արձանագրվել են էական շեղումներ: Այդ համատեքստում, մեկ անգամ ևս անդրադարձ կատարվեց ստուգումների անցկացման ժամանակ ուսանողների կողմից ժամանակակից տեխնիկական միջոցներից օգտվելու համար նշված խումբ ուսանողների նկատմամբ կարգապահական ներգործության խիստ միջոցներ կիրառելու անհրաժեշտության հարցին:

Արտահայտվեցին նաև Տ. Բարսեղյանը, Ն. Այվազյանը, Վ. Այվազյանը, Վ. Քոչարյանը, Ս. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Հաղորդումը կցվում է արձանագրությանը:

5. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում իրավագիտության ֆակուլտետի հեռակա բաժնի մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացքի մասին (գեկ.՝ ամբիոնների վարիչներ):

Ֆակուլտետի ամբիոնների վարիչներն ամփոփ տեսքով ներկայացրեցին տեղեկատվություն հեռակա բաժնի մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացքի մասին: Մասնավորապես՝

ա. Քրեական իրավունքի ամբիոնի գծով 17 մագիստրանտներից 5-ի աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկություններ չկան.

բ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի գծով 12 մագիստրանտներից 6-ի աշխատանքները կներկայացվեն առաջիկայում.

գ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի գծով 14 մագիստրանտներից 3-ի աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկություններ չկան.

դ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի գծով 15 մագիստրանտներից 3-ի աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկություններ չկան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը ֆակուլտետի ամբիոնների վարիչներին հորդորեց հետևողականություն դրսևորել մագիստրոսական թեզերի՝ սահմանված ժամկետներում ներկայացման հարցում: Միաժամանակ, առաջարկվեց մագիստրոսական թեզերն ընդունելիս, տարբերակում չդնել առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրանտների կողմից ներկայացված աշխատանքների միջև: Առաջարկն արժանացավ ներկաների հավանությանը:

Արտահայտվեցին նաև Ա. Հայկյանցը, Ա. Վաղարշյանը, Գ. Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Դրսևորել հետևողականություն մագիստրոսական թեզերի՝ սահմանված ժամկետներում ներկայացման հարցում.

Բ. Մագիստրոսական թեզերն ընդունելիս, տարբերակում չդնել առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրանտների կողմից ներկայացված աշխատանքների միջև:

6. ԼՍԵՅԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավման հարցը:

Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը ներկաներին հիշեցրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի նախորդ նիստում արդեն իսկ անդրադարձ է կատարվել ֆակուլտետի մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրների: Այս կապակցությամբ, ֆակուլտետի մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման նկատառումով, ամբիոններին առաջարկվեց սեղմ ժամկետներում ներկայացնել առաջարկություններ մագիստրատուրայում դասավանդվող դասընթացների բովանդակության, առանձին դասընթացների դասավանդման մեթոդաբանության, մագիստրատուրայում ուսումնառության ժամկետի տևողության վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅԻՆ. Վ. Ավետիսյանը, Ս. Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հանձնարարել ամբիոններին սեղմ ժամկետներում ներկայացնել առաջարկություններ ֆակուլտետի մագիստրատուրայում դասավանդվող դասընթացների բովանդակության, առանձին դասընթացների դասավանդման մեթոդաբանության, մագիստրատուրայում ուսումնառության ժամկետի տևողության վերաբերյալ:

7. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

7.1. ԼՍԵՅԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2014-2015թթ. հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության քննություններին մասնակցության երաշխավորություն տալու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅԻՆ. Խորհրդի գիտական քարտուղարը հայտնեց, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2014-2015թթ. հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության քննություններին մասնակցության երաշխավորություն տալու խնդրանքով իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդին են դիմել հետևյալ անձինք.

1. Կարեն Ամիրյան
2. Մարիամ Այվազյան
3. Համլետ Բատիկյան
4. Սրբուհի Գալյան
5. Անի Դանիելյան
6. Շուշանիկ Ղուկասյան
7. Հասմիկ Սարգսյան:

Արտահայտվեցին նաև Գ. Ղազինյանը, Գ. Դանիելյանը, Ա. Վաղարշյանը, Վ. Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով վերոհիշյալ անձանց հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայում ուսումը շարունակելու ցանկությունը՝ երաշխավորել նրանց մասնակցելու հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության քննություններին:

7.2. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ Դավիդ Հակոբյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Քոչարյանը, Կ. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ Դավիդ Հակոբյանի՝ «Միջազգային պայմանագրերի վավերականության հիմնախնդիրները (Մոսկվայի և Կարսի 1921թ. միջազգային պայմանագրերի օրինակով)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ. Հովհաննիսյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

7.3. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ Կարինե Հակոբյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Քոչարյանը, Կ. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ Կարինե Հակոբյանի՝ «Մարդու էկոլոգիական իրավունքները և դրանց երաշխավորման միջազգային իրավական գործիքակազմը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ. Հովհաննիսյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

7.4. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Տաթևիկ Գևորգյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ս. Առաքելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Տաթևիկ Գևորգյանի՝ «Հանցագործությունների համակցության քրեաիրավական հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա. Գաբուգյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Է. Շաթիրյան